Սյունիք

Բնակչություն՝ 720

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 720 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Սյունիք գյուղը հիմնադրվել է 1900թ-ին: Կապանի պղնձահանքերը շահագործող ֆրանսիացիները այստեղ ձուլարան են կառուցում, որի շուրջն էլ կառուցվում է բնակավայրը: 1929-58թթ. Սյունիքը եղել է Կապանի հանքահարստացման ֆաբրիկայի օժանդակ տնտեսությունը: 1958թ-ին ստեղծվում է Սյունիքի խորհտնտեսությունը, որի մեջ 1960թ-ին ներառվում են Սիզնագ, Ղարաչիման (Դիցմայրի), Վ.Գյոդաքլու (Վարդավանք), Ն.Գյոդաքլու (Բարգուշատ), Խալաջ (Աճանան), Շհարջիկ, Աչախլու, Բեխ, Սևաքար և Շաբադին (Եղեգ) գյուղերը: 1984թ-ին Սևաքարը և Շաբադինը (Եղեգը) տարանջատվում են Սյունիքի խորհտնտեսությունից: Սյունիք գյուղը մինչև 1982թ. գտնվում էր Կապան քաղաքի վարչական տարածքում, իսկ համայնքի Սիզնագ, Դիցմայրի, Վ.Գյոդաքլու (վարդավանք), Ն.Գյոդաքլու (Բարգուշատ), Խալաջ (Աճանան) և Խորձոր (Բաքդաշ) բնակավայրերը՝ Սիզնագի գյուղխորհրդի վարչական տարածքում:
1982թ-ին Սյունիքը տարանջատվում է Կապան քաղաքից և ներառելով նշված բնակավայրերը՝ կազմավորում ինքնուրույն վարչական միավոր՝ Սյունիքի գյուղխորհուրդը: 1991թ-ին Սյունիքի գյուղխորհրդից տարանջատվում են Խալաջ (Աճանան) և Վ.Գյոդաքլու (Վարդավանք) գյուղերը՝ կազմավորելով ինքնուրույն վարչական միավորներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2217 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 956 հա, որից՝
- վարելահող՝ 339 հա, արոտ՝ 99 հա, այլ հողատեսք՝518 հա
- բնակավայրերի հողեր՝ 89 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 78 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝83 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 12 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 959 հա, որից անտառածածկ՝ 101 հա
- ջրային հողեր՝ 40 հա